թե խոշորացույց մըն է և թե գեղագիտակ մը, որ ամեն բան կը տեսնե հսկայական համեմատությամբ»:

Սիամանթոն հզոր երևակայությամբ ստեղծում է պատկերներ, որոնք, սակայն, «իրարու հետ դասական աղերս չունին: Իմաստը զանոնք չի կապեր, անոնք պաստառին վրա բառերով նետված գույներ են, ծեփեր են, cinema-ի մը շարժունակությունը ունի»: Այսինքն՝ դրանք մղձավանջային տեսիլներ են, որոնց մեջ դժվար է որոշել իրականի ու երևակայականի սահմանը:

Վերջապես՝ «քերթողը խորհրդապաշտ է ու միստիք»: Եթե աստվածաշնչյան հները Հովհաննու Հայտնության կամ Նարեկի մեջ փնտրում ու գտնում էին աստծու «լուսեղեն դեմքը», ապա հայ բանաստեղծը, որ գրում է «Հեղափոխության Նարեկը և Հովհաննու Հայտնությունը», «արյան ծփանքներուն և հրդեհվող ցորյաններուն մեջեն հետապնդեց Հաղթանակին լուսավոր իրանը»:

Արժանին հատուցելով Սիամանթոյի «խրոխտ, ճկուն և վայելուչ» աշխարհաբարին՝ Վարուժանը կարծում է, որ եթե այդ աշխարհաբարը «քիչ մը ավելի հագվեցներ գրաբարին պղնձե բովեն հանված զեն ու զարդով, մարգարտահուռ բառերով, հատուկ ասացվածքներով», ապա նոր բառեր ստեղծելու անհրաժեշտությունը չէր լինի:

Վարուժանի այս դիտարկումները՝ Սիամանթոյի բանաստեղծական անհատականության, արվեստի, լեզվի վերաբերյալ, շատ տարողունակ են և ուղեցույց կարող են լինել ապագա ուսումնասիրողների համար:

***

Սիամանթոյի «Ամբողջական գործին» նվիրված հավաքույթով փակվում է գրական ասուլիսների շրջանը. արևմտահայ գրական շարժման հիմնական ուժերը պատրաստվում էին իրենց գործունեությունը ծավալել ավելի ընդարձակ ասպարեզներում: Շուտով հրապարակ են գալիս «Նավասարդ» տարեգիրքը և «Մեհյան» հանդեսը, ուր պիտի մշակվեին արևմտահայ հոգևոր վերածնության լայն ու հեռանկարային ծրագրեր: «Գրական ասուլիսների» դերն ու պատմական նշանակությունն այն էր, որ գրական միտքը նախապատրաստեցին նոր գաղափարների, հոգևոր մաքառումների, նոր իդեալների համար: